Հայեր, որոնք ունին աստուածաբանական մի վարժարան և մի կօլէժ օրիորդաց։ Կաթոլիկ Հայեր 4000 անձն, ունին մի քանի դպրոցներ լատին Ֆրանչիսկեանների խնամոց տակ։ Եպիսկոպոսականք 100 տուն։—Ազգանաղղքականք՝ 2000 հոգի։ Հայ գիւղերում ևս տարածուած են կաթոլիկ և բողոքական քարոզիչներ։

6։ «Թուրքիոյ և առանձին՝ Կ. Պոլսոյ Հայ ժողովրդեան վիճակը»։ որ նոյնպէս անմխիթար գոյնով է նկարագրուած։

7։ «Ազգարար» անդրանիկ Հայ ամսագիր և

8։ Հայաստանի աշխարհագրական և ժողովրդական մատենագրութիւն։ Մանկավարժանոցի տարեկան գիրն է Եր-բ-էլ կանխիկ։ Յաջողութիւն ենք ցանկանում։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ։

ԳԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ.

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 10 Մարտի ընդ համարաւ 133՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան արականաց ուսումնարանի Սուրբ Աստուածածին, և երեքդասեան արականաց ուսումնարանի Սուրբ Փրկիչ եկեղեցեաց Հայոց Աղէքսանդրապոլ քաղաքի՝ պատուելիք՝ Սարգիսն Խոյեցեանց, Արամն Մատակեանց, Յակոբն Ագուլեանց, Աղաբէկն Ջանլաթեանց և Գրիգորն Վէքիլեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 10 Մարտի ընդ համարաւ 134՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան Սահականուշեան օրիորդական դպրոցի ուսումնարանի Սուրբ Նշան եկեղեցւոյ Հայոց Աղէքսանդրապոլ քաղաքի պատուելիք՝ Պետրոսն Զիլթողցեանց, Զոհրաբն Կոստանեանց, Մահտեսի Կարապետն Իւզբաշեանց և Յարութիւնն Յարութիւնեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 14 Մարտի ընդ համարաւ 142՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան արականաց ուսումնարանի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ Հայոց Ջուղա գեղջ՝ բարեկրօն Վրթանէս քահանայն Տէր Պօղոսեանց և պատուելիք երեցփոխան Ռուստամն Մատթէոսեան և Գալուստն Մելիք Ստեփանեան։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի աղգիս ի 14 Մարտի ընդ համարաւ 143՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միջոցներն «Սրբոց Թարգմանչաց» արականաց ուսումնարանի Հայոց Հատրութ գեղջ՝ բարեկրօն Սահակ քահանայն Տէր Ոսկանեանց և պատուելիք՝ երեցփոխան Գրիգորն Հայրապետեան Զարկարեանց և Խուտաբաղիշն Աղաբէկեան Լալայեանց։

Ի ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍՕՅ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

ՎԱՐՉԱԿԱՆՔ.

27 Փետ. Սինոդը հաստատեց Շամախւոյ Կոնսիստորիայի առաջարկած Բահլեան գիւղի եկեղեցւոյ վերանորոգութեան համար ընտրուած վերակացուքը, որք են Աւետիս Հայրապետեան, Ռոստոմ Գրիգորեան, Սաղաթիէլ Ջաւատեան և Առաքել Պետրոսեան. որոնք տեղւոյն քահանայի վերահսկողութեամբ եկեղեցւոյ դրամից մինչև 150 ռուբլի պէտք է գործադրեն եկեղեցւոյ վերանորոգութեան համար, յետ աւարտման՝ ծախուց ժապաւէնեալ տօմարը առաջարկելով Կոնսիստորիային ի զննութիւն։

—

9. Փետր. Սինոդը Արժանապատիւ Խորէն Ծայրագոյն վարդապետ Ստեփանէին նշանակեց փոխանորդ և նախանդամ Ս. Պետերբուրգի Հոգևոր Կառավարութեան Հայոց, պատուիրելով նորան հսկել Ս. Պետերբուրգի և Մոսկվայի Հայոց եկեղեցեաց ներքին և արտաքին բարեկարգութեանց, նոյնպէս և հոգևորականների վերայ, փոյթ ունելով եկեղեցեաց պայծառութեան։ Սինոդը իւր այս որոշումն ծանոյց Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ Կոնսիստորիային, Մոսկվայի և Պետերբուրգի Հոգևոր Կառավարութեանցի գիտութիւն։

—

6 Փետր. Սինոդը Երևանայ Հայոց Կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ՝ թոյլ տուեց թաղել Երևանու Կաթուղիկէ Ս. Աստուածածնի եկեղեցու գաւթում, Երևանցի հանգուցեալ Մկրտիչ Սանահեանցին՝ որ նստարական կարգաւ կտակել էր նոյն եկեղեցու անուամբ հինգ կրպակ իրանց ներքնայարկ նկուղներով, նոյն եկեղեցւոյ արևմտեան կողմը իւր ծախքով զանգակատուն կառուցանել և ի յիշատակ իւր հանգուցեալ Նիկոզայոս որդու՝ Երևանի Թեմական դպրոցում իւր հաշուով երկու աշակերտ պահել։